Ե. ՏԱՐԻ 1412 ԹԻՒ ՀԱՅՈՑ 4330 ՀՈՒՆ 10 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 19 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1888 (Ն. Տ.) 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1888 24 ՄՈՒՀԱՐՐԷՄ 1306

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿՆԵՐ ՈՐՔ ԻՐ ԻՆՉ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

# ԱՐԵՒԵԼՔ

## ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 19 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1888

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

### ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻԱ

(Թղթակցէն Վիեննայէ Նոյեմբերէն, 24 սեպտ.)

Վերստին զրոյց կայ թէ Պուլկարիա իրեն համար տարբեր վիճակ մը հրատարակել կ'ուզէ. Ռուս լրագիրք և Կ. Պոլսէ գրուած նամակ մը այսօր նոյն զրոյցը կը կրկնեն. Այս նամակ կ'ըսէ թէ պուլկար նախարար Նաչեւիչ վերջերս ի Կ. Պոլիս ուղեւորութեան առթիւ յիշեցուցած է որ եթէ բարեկամական ընթացք մը չբռնուի Պուլկարիոյ մասին, Ֆերտինանտ Իշխան կրնայ հարկադրիլ տեղի տալու ազգային զգացման և իրաց տարբեր վիճակ մը հաստատել.

Գաղտնիք մը չէ որ տարւոյս սկիզբը Ֆերտինանտ Իշխան, պուլկարական խնդրոյն ուրիշ եղանակաւ կարգադրումէն յուսահատ, Իշխանապետութիւնը տարբեր վիճակի մը մէջ դնել կ'ուզէր, բայց Պ. Սթամպուլով հակառակեցաւ. Եւ այն պատճառք զորս Պ. Սթամպուլով յանձամ ի մէջ բերաւ, ցայսօր կան տակաւին. Բայց Պուլկարիա ...

...

... և Կայսրութեան հաստատման գործին ամենէն եռանդուն և ազդեցիկ գործիչն ինք (Ֆրետերիկ գահաժառանգն) եղած էր. Բնական է որ այսպիսի յայտնութիւն մը դժգոհութիւն պատճառէ Պիզմարք Իշխանին.

### ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ ԵՒ ԵԳԻՊՏՈՍ

(Թղթակցէն Գահիրէէ Թղթակցէն, 17 սեպտ.)

Չորս ու կէս տարի պաշտօնավարութենէ յետոյ, Նուպար փաշա կը գտնէ ինքզինք այն նշանաւոր Արեւելցւոց դիրքին մէջ երբ իրենց իշխանութիւնը կը կորսնցնեն. Լքեալ իր նախորդ պաշտօնակցաց կողմէ, ստորադաս չողոքորթներէ հեռացած, և յայտնապէս հարուածեալ այնպիսի ան- ...

...

... կատարին էր հասած, Թշուառութեան յետին տառապանքները կրելով մեռած է.

Իռլանտացի երկու քահանայներ վեց շաբթուան բանտարկութեան դատապար- ...

—)( 30 )(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺՈՐԺ ՕՆԷ

### ԿԵՆԱՑ ՊԱՅՔԱՐՆԵՐԸ

## ՍԵՐԺ ՊԱՆԻՆ

Անուշաբոյր զովութիւն մը կը տիրէր առանձնոցին մէջ. Քէյրօլ անդ ապաստանած էր արդէն Ժաննի եւ օրիորդ Սիւզան Հէրծօկի հետ. Մանկամարդ աղջիկը, ...

